

Ռ. Հ. Բաղդամյան

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԲԱՐԲՍՈՆԵՐՈՒՄ

Ձայնավորների փոփոխությունը բարբառներում երկու հիմնական ուղղություն ունի՝ սղման և որսական փոփոխության: Որակական փոփոխության համար գործում են տարբեր ազդակներ՝ աւտուֆին, երբ փոփոխությունը դրսևավորվում է հարևան բարբառի, գրական կամ օտար լեզվի ձևով՝ փոխառությունամբ, կամ էլ տվյալ բարբառի ուրիշ բառ ու ձևի ազդեցությամբ և նեոֆին՝ բառակազմի կից վանկի ձայնավորի ազդեցությամբ:

Այս վերջին ազդակը մի շարք բարբառներում որոշակի արտահայտություն ու տեղ ունի: Բառակազմի ձայնավորներից մեկը գտնվելով որոշակի կայուն պայմաններում, լինում է ուժեղ շեշտվածությամբ, իսկ մյուսները՝ համեմատաբար ոչ կայուն կամ ոչ ուժեղ պայմաններում՝ թույլ շեշտվածությամբ: Ուժեղ դիրքի ձայնավորը սովորաբար անփոփոխ է լինում, իսկ մյուս դիրքերում գտնվող ձայնավորները՝ փոփոխության ենթակա: Կայուն դիրքի ձայնավորների ազդեցությամբ թույլ պայմաններում գտնվող ձայնավորների փոփոխությունը տեղի է ունենում արտասանական տեղով մոտենալու կամ նույնանալու համար:

Այս օրենքը գրաբարում ու աշխարհաբարում, այնպես էլ բարբառների մեծագույն մասում չի գործում, միայն որոշ բարբառներում այն գործում է և նրանով են բացատրվում բազմաթիվ հնչյունափոխական շեղումները:

Ձայնավորների ներդաշնակության վերաբերյալ առաջին լուրջ դիտողությունը պատկանում է Ազուլիսի բարբառի ուսումնասիրող Ս. Սարգսյանին: Հեղինակը նկատում է, որ Ազուլիսում ա լինում է նախորդող վանկերի ա, ու, օ և է, ի ձայնավորներից հետո, իսկ ա լինում է ա, ու, օ-ից հետո: Հեղինակին մնում էր կատարելու հաջորդ քայլը՝ քննել մյուս ձայնավորների վիճակը և սահմանել ներդաշնակության օրենքը, որը սակայն նա չի կատարել:

Այդ քայլը կատարում է ակադ. Հր. Աճառյանը, նախ՝ Մարաղայի բարբառի և ապա՝ ափելի հանգամանորեն՝ Ազուլիսի բարբառի քննության ժամանակ: Մարաղային նվիրված մեծարժեք աշխատության մեջ հեղինակը յուրահատուկ բարեխղճությամբ քննում է բարբառի բոլոր ձայնավորները և որոշում է նրանց հնչյունափոխության պայմանները: Այսպես, հեղինակը ցույց է տալիս, որ երկու և ափելի վանկանի բառերում առաջին վանկի ո-ն դառնում է օ, որը, ինչպես նաև ո-ի փոփոխությամբ առաջացած ձայնավորները, հարմարվելով աջորդ ու նախորդ վանկերի ձայնավորներին, դառնում են թեթև կամ ծանր:

1 Ահա հեղինակի տողերը. «Անկարելի է որոշել միանգամից որպես կանոն, թե ի՞նչ տեղ կամ ի՞նչ դեպքում է ա, և ի՞նչ դեպքում է ա, բայց ինձ թվում է, կարելի է մոտիկաբար մի այսպիսի կանոն հանել՝ ա երկու կամ շատ վանկ ունեցող բառերի մեջ չէ արտասանվում ա եթե նախորդող վանկումը կան իստակ և թավ ձայնավորներ ա, օ (ս), ու, իսկ ընդհակառակը արտասանվում է ա եթե նորանից առաջ վանկումը կան ու, օ, ու (կամ ի), ե, է, ի» (Ազուլեցոց բարբառը (Ջուկերի լեզուն), լեզվաբանական հետազոտություններ, I և II մաս, Մոսկվա, 1983, էջ 27):

Համեմատելով Ազուլիսի և Մարաղայի բարբառները, հեղինակը նկատում է, որ ձայնավորների ներդաշնակության օրենքը Ազուլիսում ավելի կանոնավոր է: Մարաղայում այդ օրենքը նա համարում է թուրքերենի ազդեցության հետևանք. այդ ազդեցությունը «Մարաղայի բարբառի վրա մեծ չափերով երևում է նաև բառարանի մեջ, որ մեծ մասամբ զրկված բուն հայկական բառերից, փոխ է առել բաղմաթիվ թուրք բառեր, որոնք մինչև անգամ հայկական մասնիկներով է զարդարում»²:

Մեկ տասնամյակ հետո, Ազուլիսի բարբառի մենագրական ուսումնասիրության առիթով, Հր. Աճառյանը ոչ միայն սահմանում է ձայնավորների ներդաշնակության օրենքը, այլև մերժում է օտար ազդեցության հարցը և ցույց տալիս, որ այն զուտ հայկական կերտվածք է:

Օտար ազդեցության հարցին հեղինակն անդրադառնում է նաև Պոլսի. Համշենի ու Վանի բարբառների առիթով և անվերապա կերպով հաստատում, որ շնայած այդ բարբառները շատ են ազդված թուրքերենից, բայց ձայնավորների ներդաշնակության օրենքը ստեղծել են ինքնուրույնաբար: Ուշագրավ է, որ Պոլսի բարբառը, որն ամենամեծ չափերով ողողվել է թուրքերեն բառերով և դրանք պահել թուրքերենի ներդաշնակությամբ, ոչ միայն հայերեն բառերը չի ենթարկել այդ օտար հորինվածքին, այլ, ընդհակառակը, բառավերջի շեշտված Ը-ն փոխարինել է Ռ-ով, որը շատ կարևոր ու տարածված հատկանիշ է թուրքերենում:

Ձայնավորների ներդաշնակության օրենքի հաջորդ քննողը պրոֆ. էդ. Աղայանն է³: Մեղրիի բարբառին նվիրված մենագրության մեջ հեղինակը նույնպես մերժում է թուրքերենի ազդեցության հարցը: Ավելի ծանրանալով ձայնավորների ներդաշնակության օրենքի և հնչյունական ուրիշ օրենքների զարգացման պատմության վրա, պրոֆ. Աղայանը պարզում է մի շարք կարեւոր երևույթներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեն ինչպես հնչյունական օրինաչափությունների համեմատական քննության, այնպես էլ բարբառների առաջացման հարցերը լուսաբանելու համար:

Հեղինակը ցույց է տալիս, որ ուշ շրջանի գրական ու աղբյուրներեն փոխառությունները սովորաբար չեն ենթարկվում բարբառի օրինաչափ փոփոխություններին և ընդհանրապես պահվում են անփոփոխ: Սրանից հետևում է, որ այդ փոխառությունների շրջանում բարբառային օրինաչափությունները արդեն քարացած են եղել:

Արաբական փոխառություններն, ընդհակառակը, մեծ չափերով ենթարկվում են բարբառի հնչյունափոխության օրենքներին, որից էլ հետևում է, որ այդ շրջանում բարբառը ապրել է իր զարգացման վերջին շրջանը: Այսպես. հեղինակը բավական համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ բարբառում ա> է փոփոխությունը կատարվել է նաև արաբական տիրապետության շրջանում, իսկ ու> փոփոխությունը՝ ոչ, այսինքն՝ ա> է փոփոխությունը հարատևել է մինչև 11-րդ դարը, իսկ ու> փոփոխությունը դադարել է գործելուց 8-րդ դարի կեսերին:

2 Հր. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926, էջ 14—15:

3 Հեղագայում կատարված ուսումնասիրությունները վեր են հանել ձայնավորների ներդաշնակության օրենքի դրսևորումները առանձին բարբառներում և ավելի են ընդարձակել նրա տերիտորիալ շրջանակները:

Ավելի առաջ տանելով իր քննությունը, պրոֆ. Աղայանը ցույց է տալիս, որ լիակատար ներդաշնակությամբ ը ձայնավորը նմանվում է իրենից առաջ կամ հետո գտնված ու ձայնավորին (կնգուղ>կունգուղ, ոսկր>ուսկուռ) և ապա նկատի առնելով որոշ բառերի զուգաձևերը (ձուկն>ձօկուն, ձօկնր, մուկն>մուկուն, մօկնր, ունկն>օնգուն, օնգնր), հեղինակը գտնում է, որ ը>ու փոփոխությունը ավելի վաղ շրջան է ներկայացնում (մոտավորապես 8-րդ դարից էլ առաջ), քան ու-ից ստացված օ փոփոխությունը (այսինքն՝ ձուկն>ձուկուն>ձօկուն, մուկն>մուկուն>մօկուն, ունկն>ունգուն>օնգուն), այլապես նույնացման արդյունքը ու չէր լինի, այլ՝ օս⁴:

Վերջընթեր վանկը շեշտող բարբառները շատ քիչ բան են ցույց տալիս նախաշեշտ վանկերի ներդաշնակության վերաբերյալ և բնականաբար ամենալուրջ ուսումնասիրությամբ միայն կարելի է լուսաբանել նախաշեշտ վանկերի սկզբնական վիճակն ու ներդաշնակության ընթացքը:

Այստեղ արդեն պրոֆ. Աղայանը հանդես է բերում մի նրբանկատություն և ի հայտ բերում մի քանի կարևոր պայմաններ, այսպես.

1) Դիտելով Մեղրու բարբառի ծակծակոտ>ծրկծրկօտ (փոխանակ՝ ծրկ-ծրկօտ), թուլահալ>թլահիլ (փոխանակ՝ թլանիլ), յիշատակ>յատակ «ժառանգ» ձևերը, հեղինակը զարտուղության պատճառը համարում է այն, որ ձայնավորների անկման օրենքը տեղի է ունեցել ավելի ուշ շրջանում, քան ձայնավորների ներդաշնակության օրենքը:

2) Դժվարություն են ներկայացնում միայն այն բառերը, որոնք իրենց ձայնավորներից զրկված էին հին հայերենում (ինչպես՝ բրդոտ>բռդօտ. սգաւոր>սքգ'ըվուր). սրանց արմատը (բուղ, սօգ') թեթև ձայնավորով լի-նելով՝ ածանցներն էլ բնականաբար թեթև են:

3) Դ', կ', ք' բաղաձայններից հետո կարող են լինել միայն ա, օ, ի՝ անկախ բառում եղած մյուս ձայնավորների աստիճաններից:

4) Ձայնեղ սլայթականներից և գ, լ, շ, ն, չ, խ բաղաձայններից հետո ա-ն սովորաբար դառնում է է, որը նախաշեշտ վանկում վերածվում է ի՝ ձայնավորի՝ անկախ բառում գտնված մյուս ձայնավորների աստիճանից:

Այս ա>է>ի փոփոխությունը, թե՛ ծանր և թե՛ թեթև ձայնավորներից առաջ «ներքեմնի անցողակի վիճակի մնացորդ է», քանի որ «ա>է փոփոխությունը միանգամից չի կատարվել, այլ նախ՝ ա-ն փափկանալով դարձել է ա. և ապա՝ վերջինս, ժամանակի ընթացքում՝ վերածվել է է-ի: Ահա հենց այն ժամանակ, երբ ա-ից ստացված ա-ն թեթև լինելով՝ շեշտից առաջ կանոնավորապես տվել է ի՝, որը մնացել է անփոփոխ և հետագայում առաջացած ա>է. փոփոխությունը չի ազդել նրա վրա:

Այսպիսով, իբրև բացառություն թվացող է>ի՝ փոփոխությունն իրականում ոչ միայն պատահականություն չէ, այլև հիանալի կերպով ներկայացնում է ա>է հնչյունափոխության միջին աստիճանը⁵:

Այս բոլորը չնայած վերաբերում են Մեղրու բարբառին, բայց բավականաչափ լույս են սփռում ուրիշ բարբառներում անբացատրելի թվացող երե-վույթների վրա: Այսպես, Մարաղայի բարբառում բազմավանկ բառերի առաջին վանկի ո ձայնավորը ըստ օրինի դառնում է օ. այս ա-ից առաջացած մյուս

⁴ է դ. Աղայան, Մեղրու բարբառ, Երևան, 1954, էջ 107.

⁵ նույն տեղում, էջ 105.

ձայնավորներն ու երկբարբառները փոփոխվում են տարբեր ձևերով՝ ալևոր> իւալիթ (փոխանակ՝ իւալվիթ, բովել>պովիլ (փոխանակ՝ պովիլ), սակալն ալգպես է առաջին հայացքից, իրականում ո>ի (ալևոր>իւսլիթ) փոփոխությունը ակդի է ունեցել ա-ի ազդեցությամբ, իսկ ո>օ փոփոխությունը՝ Աճառյանի օրենքով: Այս նշանակում է, որ ինչպես ո>օ, այնպես էլ ո>ի, օ և վերջիններիս հետագա փոփոխությունը պայմանավորված է այդ հնչյուններից առաջ կամ հետո գտնված ձայնավորներով:

Այժմ արդեն հնարավոր է բացատրել առանձին բարբառներում շմեկնաբանված կամ իբրև բացառություն համարված հնչյունափոխության բացմաթիվ դեպքերը (հմտ. կանաչ>զանանչ, ականջ>անդոջ, բոկ(իկ)>բուրուդ, ոչիլ>օշուլ բոլորն էլ Կեսարիայի բարբառում, տորոն>տարան, թոնիր>թարան, սկեսուր>սկասար, բոլորն էլ Ագուլիսի բարբառում, տարգալ>տիկալ, թիթալ և այլն): Ձայնավորների ներդաշնակության օրենքի շնորհիվ է, որ մի քանի բարբառներում քերականական բաղմաթիվ ձևեր իրենց կերպարանքը փոխելով բոլորովին նոր կերպարանք են ստացել: Նույնպես այդ օրենքով են բացատրվում ձայնավորների հավելումը, ինչպես՝ պարապ>հրապարապ>հապարապ||ապարապ, որով բաղաձայններն ավելի հեշտ ու թեթև են արտաբանվում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձայնավորների ներդաշնակության օրենքը բարբառներում զարգացման տարբեր աստիճանների վրա է: Այսպես, Համշենի բարբառում օրենքն ընդգրկում է մի քանի բառ միայն, Առտիալում՝ երեք բառ (եղունգ>Աշ. օղունդ, լհ. օհունգ, ուղեղ>լհ. օղուղ և չորեքշաբթի>լհ. չօրեք>չօրօր), որը նշանակում է, թե օրենքը այստեղ չի գործում: Կեսարիայում նկատված են այդ օրենքի մասնավոր դրսևորումները, իսկ Պոլսում՝ միայն երեք դեպք՝ երբ շեշտված ու-ից առաջ և հետո ը-ն դառնում է ու՝ մանավանդ բաց վանկում, երբ բառամիջում է և օ կամ օ և է ձայնավորներ ունեցող վանկերում այդ ձայնավորները փոխադեցաբար դառնում են օ և երբ առաջին վանկի ի-ն և հաջորդ վանկի ու-ն դառնում են ու:

Շամախիի, Կարճևանի ու Վանի բարբառներում օրենքն սկսել է գործել՝ ընդգրկելով բաղմաթիվ դեպքեր, բայց ոչ մեկում էլ վերջնական ձևավորման չի հասել: Այսպես, Վանի բարբառում օ կամ ո ձայնավորն է, որ հետևելով հաջորդ վանկի ու-ին վերածվում է ու-ի (հմտ. լոյս>լոս սևո. լուսու, դործ. լոսօւ. խոզ սևո. խուդու, բացառ. խուդուց, ամօթ բացառ. ամութութնէ): Իսկ ընդգրկված են այդ օրենքին հակառակ օրինակները նույն Վանի բարբառում (հմտ. բարեկամ>պարէկամ, բառնալ>պառնալ, բաղարջ>պաղառճ, վաստակ>վաստակ, աղաչանք>աղաճանք, դատաստան>տատաստան և այլն): հաջորդական վանկերում ա կամ ա և օ ունեցող տառ բառ ունի Վանի բարբառը, որից ա-ին հաջորդում է օ կրկն բառում, ա-ին՝ օ երկու բառում, օ-ին՝ ա երեք բառում և օ-ին ա երկու բառում, ալսինքն՝ տասը բառից չորսի վրա տարածվում է օրենքը, իսկ վեցի վրա չի տարածվում. ա կամ ա և ո ձայնավորներ ունեցող տասնչորս բառից տասում տասին վանկի ա-ին հաջորդում է ա-ով վանկ, երկու բառում ու-ին նախորդում է ա, երեքում ու-ին հաջորդում է ա-ով վանկ, ուրեմն տասնչորս բառից ինն բառ ենթարկվում է ներդաշնակության օրենքին. իսկ հինգը՝ ոչ:

Համեմատաբար մեծ թվով կանոնավոր դեպքեր և լայն շրջանակներ ընդգրկելով, ներդաշնակության օրենքը բավական բարձր զարգացման է հասել

Մարաղայի, Մեղրի, Ագուլիսի ու Կիլիկիայի բարբառներում, չնայած, որ այստեղ էլ այն համայնապարփակ չի դարձել։ Այլ խոսքով՝ ծանր ու թեթև ձայնավորների ունեցող բարբառների որոշ մասում ներդաշնակության օրենքը ձևավորվել ու բարձր զարգացման է հասել, քան ուրիշ բարբառներում։

Ձայնավորներից ծանր են ա, ու, օ, ռ, թեթև են դրանց նմանակները՝ ա, ու, օ, ի, չեղոք են է և ի ձայնավորները, որովհետև դրանք չունեն իրենց նմանակները։

Սակայն տարբեր բարբառներում ձայնավորների այդ շարքերը կարող են քանակապես փոխվել. այսպես՝ Ագուլիսը, Կարճեանը և այլն չունեն ը-ի տարբերակը՝ ի-ն, ուստի և ը-ն Ագուլիսում կարող է լինել թե՛ ծանր և թե՛ թեթև ձայնավորների հետ. նույն Ագուլիսում ի-ն թեթև է հաջորդող վանկի ձայնավորի համար և չեղոք է իրենից առաջ փոխված վանկի ձայնավորի համար։ Մարաղայում ծանր են նաև ըի, ըէ, ուի, ուէ ձայնավորներն ու երկբարբառային ձայնավորները, Կարճեանում թեթև է նաև ի-ն, իսկ է-ն՝ չեղոք, ուստի կարող է լինել ինչպես թեթև, այնպես էլ ծանր ձայնավորի հետ (հմտ. անկանակ > հինգէնակ, ծանրանակ > ժընդրէնիլ)։ Ագուլիսում այլ և ուր երկհնչյուններով վանկերը թեթև են և դրանցով կազմված վանկերն ստանում են թեթև ձայնավորներով ածանցներ ու մասնիկներ (հմտ. ալ մասնիկով հոգնակին)։

Ը-ն Ագուլիսում կարող է թեթևանալ և դառնալ ի (հմտ. ջիղ-ճիլ հավաքականը՝ ճըլընատիք՝ || ճիլինատիք՝. այդի՝ հավաքականը՝ ըդ՛րնատիք || իգի-նատիք)։

Մեղրիում ի-ն սովորաբար թեթև է, բայց նա չեղոք է բայերի անորոշ դերբայում և ուրիւն > օթւն || օթին ածանցում, այլ խոսքով՝ նա և՛ թեթև է, և ծանր միաժամանակ, ուստի կարող է լինել թե՛ ծանր և թե՛ թեթև ձայնավորներից հետո։

Այսպիսով, ամենուրեք ծանր են ա, ու, օ և թեթև են ա, ու, օ ձայնավորները, բարբառների մեծ մասում չեղոք են է և ի ձայնավորները, չնայած, որ մի քանիստ չեղոք է նաև ը-ն, իսկ ի-ն՝ առանձին բարբառներում (օրինակ՝ Կարճեանում) որոշ պայմաններում թեթև է, այլ պայմաններում՝ չեղոք։

Ը, ի՝ ձայնավորները սովորաբար նմանվող ձայնավորներ են, սակավ պեպքերում՝ ա-ն, քիչ ավելի՝ ի-ն. համեմատաբար շատ նմանեցնող են ու. ու ձայնավորները։

Ձայնավորների ներդաշնակության համար, ինչպես նշվեց, վճռական նշանակություն ունի հնչյունի դիրքը բառակազմում. ուժեղ շեշտված վանկի ձայնավորը սովորաբար հանդես է գալիս ազդողի, նմանեցնողի դերում. այդ դիրքի համեմատ էլ ներդաշնակությունը լինում է դեպի ետ և առաջ։ Երբ ազդվող ձայնավորը իր բնույթով հարմարվում է հաջորդող վանկի ձայնավորին, տեղի է ունենում ետընթաց ներդաշնակություն, իսկ երբ նա հարմարվում է նախորդող վանկի ձայնավորին, տեղի է ունենում առաջընթաց ներդաշնակություն։ Բարբառներում ավելի տարածված է առաջընթաց ներդաշնակությունը, չնայած, որ բարբառների մեծ մասում ը ձայնավորը սովորաբար ենթարկվում է ետընթաց ներդաշնակության։

Վան բարբառներ, որոնց մեջ հարդի է ը ձայնավորի և՛ առաջընթաց և՛ հետընթաց ներդաշնակությունը, կան բարբառներ էլ, որոնց մեջ սովորական է միայն ետընթաց ներդաշնակությունը։

Վերջընթեր վանկը շեշտող բարբառներում նախաշեշտ վանկի ձայնավորները սովորաբար սղված լինելով շատ քիչ բան են ցույց տալիս առաջընթաց ներդաշնակության համար, սակայն, ինչպես երևում է բառարմատին ավելացող նորանոր վանկերից, ներդաշնակությունը առաջընթաց է. վերջնավանկը շեշտող բարբառները, ավելի հակված են դեպի առաջընթաց ներդաշնակությունը:

Ազդվող ձայնավորները կարող են նմանվել կամ նույնանալ ազդող ձայնավորին. սովորաբար նմանվել կարող են այն ձայնավորները, որոնք ունեն նմանակներ, ինչպես՝ ա—ա, ու—ու, օ—օ, ը—ի՝. նույնանալու համար ձայնավորները պետք է որակական անցում կատարեն, իսկ այդ տեղի է ունենում մեծ մասամբ ը-ի միջոցով, այսինքն՝ նույնացման ենթակա ձայնավորը վեր է ածվում ը-ի, և ապա անցնում ազդող ձայնավորի որակին:

Բարբառներում ավելի տարածված է նմանեցման երևույթը. նմանվելու համար նմանակներ ունեցող ձայնավորները հարմարվում են երանգով (օրինակ ա-ի ազդեցությամբ օ, ու ձայնավորները դառնում են օ, ու. օ-ի ազդեցությամբ ա, ու ձայնավորները դառնում են ա, ու կամ ընդհակառակը), արտաբերության տեղով հեռու ձայնավորը վեր է ածվում ազդող ձայնավորին մոտիկ ձայնավորի (օրինակ՝ ի-ի ազդեցությամբ ը-ն դառնում է է):

Ահա մի քանի օրինակ յուրաքանչյուր դեպքի համար.

Ա > ա

Ա-ի ազդեցությամբ—առաջ > սուռչ > առաչ (Կեսարիա), սկանչ > անգ ան անգ՝ աճ (Մարաղա), աղբալը > աղբար > ախբար (Կեսարիա) ճախարակ > ճար-խակ՝ (Մարաղա):

Օ-ի ազդեցությամբ—գովել > կ՛օվալ (Մարաղա), օրինակ > Օռնագ (Կեսարիա):

Ու-ի ազդեցությամբ—ալիւր > ալուր (Մարաղա, Կեսարիա), դամոն > դամոն (Կեսարիա), հարիւր > հարուր (Գանձակ, Կեսարիա), աղբիւր > ախրուր (Կեսարիա), բունկալ > բունգալ (Կեսարիա):

Է-ի ազդեցությամբ—սկեսրալը > կեսրար (Համշեն):

Ի-ի ազդեցությամբ—մխիթարել > մխիթարիլ (Ագուլիս), գանգաս դ՛ինգ՝ատ (Ագուլիս), արժան > իժան > իժան (Մեղրի), աւելացնել > ի՛վի՛ցանիլ (Մեղրի):

Ա > ի

Ի-ի ազդեցությամբ—պահել > բիհէլ (Կեսարիա):

Ի-ի ազդեցությամբ—ազի > հէքի (Կեսարիա), ալգի > ադի > էքի (Կեսարիա):

Ո > Օ

Օ-ի ազդեցությամբ—ցորեան > ցորեն > ցորէն (Պոլիս), ցերեկ > ցորեկ > ցորէկ (Պոլիս):

Ու > ա

Այ-ի ազդեցությամբ—գարուն > կ՛առուն (Մարաղա), դարթուն > գարթուն (Գանձակ), ուրագ > աւրագ (Տրապիզոն):

Ա>ու

Առաջընթաց—յուցանել>ցուցունել (Կեսարիա, Պոլիս), իւրեար>ուրալ>
ուրուր (Ագուլիս), լուսնակալ>լուսունգա (Պոլիս)։

Ետընթաց—արտասուք>արդուսունք։

Ա>է

Առաջընթաց—խեչափառ>խէչէփառ (Կեսարիա)։

Ետընթաց—քարշել>քէշէլ, վալթել>վաթել>վէթէլ (Կեսարիա)։

Ա>ի

Ետընթաց—չամիչ>չիմիչ (Կարճևան), անկանեմ>իչնիմ։

Առաջընթաց—աւել>իվիլ (Մեղրի)։

Ա>ի

Ետընթաց—երիցակին>երիցկին>իլիսգին (Կեսարիա)։

Ա>ա, ա

Առաջընթաց—տառեխ>տառախ (Ագուլիս), աշակերտ>աշկառտ (Ագուլիս), պահ մը եկ>բահմաղ (Կեսարիա)։

Ետընթաց—մենակ>մանակ (Ագուլիս), եղածու>անանու (Ագուլիս)։

Ա>օ, օ

Առաջընթաց—ցորեան>ցօրօն (Մարաղա), չորեքշաբթի>չօրեք>չօրօք (Լեհհալ)։

Ետընթաց—երբ որ>հօրփօրօր (Համշեն), քերովբէ—քօրօփէ (Պոլիս), Սերովբէ—Սօրօփէ (Պոլիս)։

Ա>ու

Ետընթաց—երգումն>ուրղում (Կարճևան)։

Ա>ի

Ետընթաց—չրի>չիրի (Կեսարիա), բրինձ>պիրինձ (Մարաղա), բժիշկ>պիժիշկ (Մարաղա), պզաիլ>բիզգիզ (Կեսարիա), կը սիրեմ>քիւիրիմ։

Ա>օ

Առաջընթաց—ոսկր>օսգօր (Կեսարիա), տրորել>դօրօրէլ, խոռվել>խօ-
ուզէլ։

Ա>ու, ու

Առաջընթաց—ձուկն>ձուկուն (Կարճևան), ոսկր>ուսկուն (Ագուլիս, Մեղ-
րի), ութը>ութու (Պոլիս), բուղուղու պատուղը։

Ետընթաց—բժոժ>բուժուժ (Ագուլիս), կնոճ>կուճուճ (Ագուլիս, Մեղրի),
րնկոյզ>ունգուզ (Կեսարիա), լեղու>լուգու (Ագուլիս, Դանձակ), փշուր>փոճ-

շար (Մարաղա), դղում>տառում (Մարաղա), սղոց>սուղուց (Ագուլիս),
պտուկ>քուղուգ (Կեսարիա), կկու>կուկու (Մեղրի), գուգուգ (Կեսարիա),
կծու>գուծու (Պոլիս), կծոխուր>կուծուխուր (Մեղրի), կնունք>կունունք
(Մարաղա), գունունք (Պոլիս), կտուց>գուդուց (Պոլիս), պտուղ>պուտուղ
(Մարաղա), րուղուղ (Պոլիս), տխուր>տուխուր (Մարաղա), գուխուր (Պոլիս),
կկուղ>գուգուղ (Տրապիզոն), զրուց>զարուց (Մեղրի) և այլն:

Ետընթաց—առաջընթաց—կը ցուցանեն>կը ցուցրեն>քուցուցունուն:

Մասնավոր—լիակատար՝ ետընթաց—գալլ>գուլլ, հավաքական՝ զըլընա-
քիք՝>գուլունատիք՝ (Ագուլիս), որդն>ուունը, հավաքական՝ րոնրնատիք՝>ուո-
ունատիք՝ (Ագուլիս):

Ի>ու

Ետընթաց—տանտիկին>դօնդիգօն (Համշեն):

Ո>ա

Առաջընթաց—այսօր>ասօր>ասար (Ագուլիս).

Եսընթաց—մոծակ>մածակ (Ագուլիս), ցորեան>ցարան (Ագուլիս), կոր-
եակ>կարակ (Ագուլիս), ատնար <ոտնար> (Ագուլիս):

Ո>ի

Ետընթաց—փորել>փէրէլ (Կեսարիա), փոխել>փէխէլ (Կեսարիա), թո-
թուել>թէթվէլ (Կեսարիա):

Ինչպես երևում է, մասնակի ու լիակատար ներդաշնակության ամենից
շատ ենթարկվում է ր ձայնավորը (նույնիսկ այն քարքառներում, որոնց մեջ
ձայնավորների ներդաշնակությունն ընդհանրապես մերժվում է): Լինե-
լով մի թույլ հնչյուն, ր-ն հարմարվում է թե՛ իրեն նախորդող և թե՛ հա-
ջորդող վանկերի ձայնավորներին ու ըստ այդմ փոխում է իր երանգը:

Սակայն միշտ չէ, որ ր-ն հարմարվում է և ներդաշնակության օրենքը հաս-
նում է իր վախճանին, այսպես, Մարաղայի քարքառում երկվանկ բառերի
առաջին վանկում ր-ն դառնում է ու՝ հաջորդող վանկի ո>ի-ի աղդեցությանը,
ինչպես՝ կտոր>կուտիր, կթոց>կուրից, սխտոր>սուխտիր, սղոց>սուղից,
պղտոր>պուխտիր, բայց հետևյալ և ուրիշ օրինակներում (ինչպես՝ ինձոք>
խուճձիր, իմոր>իւմըճիր, քթոց>քթթուճց) ներդաշնակության օրենքը մնում
է կիսավարտ:

Կամ, եթե ա, ը, րէ, րժ, օ ծանր ձայնավորների մոտ ր-ն մնում է ան-
փոփոխ, ապա մի երկրորդ պայմանի աղդեցությամբ նա փոխում է իր որա-
կը. այսպես՝ Մարաղայի քարքառում ր-ն ծանր ձայնավորների մոտ մնում է
ը, բայց նույն դիրքում մ, ն, լ-ից առաջ ավելի խլանալով դառնում է ը՛ (ինչ-
պես՝ մմեռն>մըմըեռ, իմել>իւմըլ, մտառնել>մըռնել, լինել>լըլնել>լըլել,
հկուլը>*նլտիկ>նըլտիկ՛, կրել>կըրել):

Մեղրու քարքառում բաղմավանկ բառերի շեշտահաջորդ բաց վանկի ի-ն
«րինաչափ կերպով դառնում է. այդ օրենքով (և ոչ թե ձայնավորների ներ-
դաշնակությամբ) է բացատրվում հայելի>նիլլի, ջորի>ջուրի, անալի>նուլի
բառերում ի>ե փոփոխությունը: Գ՛ա, գ՛ն, գ՛ն, գ՛ի՛ և քմային կ, ք՛ով

կազմված խմբերը Մեզրու բարբառում ախճան կայուն են, որ ներդաշնակության օրենքին չեն ենթարկվում ու մնում են մյուս ձայնավորների առաիճանից անկախ (հմմտ. կապույտ > կ'ապուտ, գազաթն > գէգ աթ, ժանգոտ > ժէնգ'ուտ)։

Այս նշանակում է, որ եթե բառակազմի որևէ ձայնավոր հնչյունափոխական այս կամ այն օրենքով պետք է վերածվի ուրիշ հնչյունի, ապա այդ օրենքը գործում է անկախ ձայնավորների ծանր կամ թեթև լինելուց։

Այդպիսի փոփոխությունները բավական պարզ կերպով նշում են հնչյունական օրենքների զարգացման պատմությունն ու փոխհարաբերությունը։

Ձայնավորների ներդաշնակության օրենքը տարածվում է նաև բարդ և ածանցավոր բառերի վրա, եթե բարդությունը լիակատար մթապնման է հասել, ապա անցնում է պարզ բառերի շարքը, իսկ եթե բարդության բաղադրիչները դեռ պահում են իրենց ինքնությունը, ապա առաջին և վերջին վանկերը կամ բաղադրիչները պահվում են արմատական ձևով և տալիս բացառություններ (հմմտ. ծառգարթար (Մարաղա), տարալիսն (Մրդ), Օրքաշպաթ (Մրդ)։

Ձայնավորների ներդաշնակության օրենքը համեմատաբար ավելի կատարելության հասցրած բարբառներում նույնիսկ բազմավանկ բառերի միջին վանկերը գտնվում են նախորդ կամ հաջորդ ձայնավորների ազդեցության տակ, այդ պատճառով նրանք ստանում են երկու տարբեր ձև։

Ավելին, կան բառեր, որոնց առաջին և վերջին վանկերը տարատեսակ են (հմմտ. արեղա > ապէղա (Մրդ), բարեկենդան > պառեկ'աննանք (Մրդ), ծիճեռն > ծի՛ծէռնակ (Մրդ), երեւալ > էրավալ (Մրդ), կենալ > կէնթանը (Մրդ), որը նշանակում է, թե ձայնավորների ներդաշնակությունը իր լիակատար ավարտին չի հասել։

Դրա պատճառներից մեկն այն է, որ յուրաքանչյուր օրենք ունի իր հակառակ օրենքն էլ. ուրեմն, հակազդեցությունը թույլ չի տվել, որ օրենքը դառնա համայնապարփակ։ Այսպես, Աճառյանի օրենքով Մարաղայի բարբառում դառնակ պետք է դառնար առնակ, իսկ ձայնավորների ներդաշնակության օրենքով՝ առնակ, այնինչ դրանց դեմ գտնում ենք առնակ, որը նշանակում է, թե Աճառյանի օրենքն ավելի առաջ է գնացել։

«Ավելի զարմանալի են այն պարագայները, երբ բառը հայերենի մեջ միատարր, նոր ձայնափոխությամբ դարձել է ալլատարր, այսպես են... ույնլժր, ուրար, ուրացող և ալլն. այս կարգի բառերի համար պետք է կարծել, թե ձայնափոխությունը ավելի հին է, քան ձայնավորների ներդաշնակության օրենքը», մանավանդ, որ այդ օրենքը ունեցող բարբառներում նույն բառերը գտնում ենք միատարր ձևով (իսկ եթե այդպես չեն, ապա փոփոխությունը բացատրվում է ուրիշ կանոնով)։

Ձայնավորների ներդաշնակության տեսակետից բարդ բառերը երեք կարգի են բաժանվում.

1. Երբ բարդության երկու մասերն ունեն ծանր ձայնավորներով վանկեր, ապա բարդությունը լինում է ծանր ձայնավորներով, իսկ երբ այդ մասերը լինում են թեթև, ապա բարդությունը լինում է թեթև ձայնավորներով (խապախուտ, մըտնաշօնչ և շի՛լի՛րաչիւր, արունի՛վա--Մրդ)։

2. Այն անհոդակապ բարդությունների մեջ, որոնց մասերը անկախ չեն դիտակցվում, անցնում են պարզ բառերի շարքը, այսինքն՝ ներդաշնակություն-

⁶ Հր. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, էջ 147։

նք լրիվ է լինում, իսկ նրանք, որոնց մասերն անկախ գիտակցվում են, պահմում են սկզբնական ձևով, այսինքն՝ եթե բաղադրիչներից մեկը թեթև, իսկ մյուսը ծանր ձայնավորով է, պահվում են անփոփոխ (գի՛տնարած, խըրխա՜ն-դակ, արունթաթախ)։

3. Հոդակապով բարդությունների մեջ եթե մասերից մեկը ծանր, իսկ մյուսը թեթև ձայնավորով է, ապա հոդակապը հարմարվում է մեկին կամ մյուսին (Ագուլիսում ավելի շատ երկրորդ բաղադրիչին, որովհետև առաջինի ձայնավորը շեշտի տեղափոխության պատճառով դառնում է ո կամ ջնջվում է (ըդաջուր, ճըղնըկուտուր և լիսամուտ, գի՛նդի՛կըծըէկ)։

Ածանցավոր բառերում ածանցը սովորաբար հարմարվում է բառին, ըստ այդմ էլ ածանցը լինում է թեթև կամ ծանր (այդպես է հոգնակիի կազմության, հոլովման ու խոնարհման մեջ)։ Որոշ ածանցներ՝ օրինակ Մեղրիում ան, օղ, սղ, ակ, վուր, Կարճեանում նաև օթին, ուն, ուկ, ական ածանցները և դերբայական իլ վերջավորությունը ներդաշնակության օրենքին չեն ենթարկվում։

Այսպիսով, ձայնավորների ներդաշնակության օրենքը առաջացել է բարբառների բնական զարգացմամբ և որպես զուտ հայկական կերտվածք իր ձևավորմամբ հասնում է այն դարերին, երբ դեռ արաբները մուսթ չէին գործել Հայաստան։ Սակայն նա ավելի հին չէ, քան Աճառյան օրենքը։

Այդ պատճառով քննարկվող օրենքը թուրքերենի ազդեցությանը վերագրելու առիթը առերևույթ է։

Այս օրենքը հատուկ է մեր այն բարբառներին, որոնք բռնում են պատմական Հայաստանի Ուրմիա լճի շրջակայքը, Փայտակարանը, Արցախ-Սյունիքը և հեռավոր Կիլիկիան ու Անտիոքը։

Р. А. Баграмян

ЗАКОН СИНГАРМОНИЗМА В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

Р е з ю м е

В фонетике армянских диалектов особое место занимает закон сингармонизма. Оказывается, что большая часть диалектов не знает этого закона, в некоторых диалектах можно найти только единичные случаи его, в других он стал действовать, охватив довольно много примеров и лишь в отдельных диалектах закон сформировался во всех его проявлениях.

Однако, благодаря противодействию других законов изменения гласных, и в последних диалектах сингармонизм не стал всеохватывающим законом.

Сравнительное изучение законов изменения гласных дает полное основание утверждать, что сингармонизм сформировался в глубокой древности и не имеет никакого отношения к влиянию тюркских языков.

Исследуемый закон достиг довольно высокого развития в тех армянских диалектах, которые расположены у озера Урмии, Пайтакаране, Арцах-Сюнике и в Киликии и Антиохе.